



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ  
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

29 հուլիսի 2021 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2 Ա

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 46 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ. Սարգսյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, Երևանի քաղաքապետի խորհրդականները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Դ.Համբարյանը, քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի պաշտոնակատար Ա. Մուրադյանը, քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետի պաշտոնակատար Ռ.Գյոզալյանը, աշխատակազմի լրատվության վարչության պետ Ի. Կուրբախյանը:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ. Սարգսյանը տեղեկացրեց, որ համաձայն Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման հավելվածի 115-րդ կետի՝ Երևանի ավագանու 2021 թվականի հուլիսի 29-ի արտահերթ նիստը գումարվել է ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ: Համաձայն Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման հավելվածի 116-րդ կետի՝ ավագանու արտահերթ նիստը անցկացվում է նախաձեռնողի սահմանած օրակարգով և ժամկետում:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ. Սարգսյանը ներկայացրեց Երևանի ավագանու 2021 թվականի հուլիսի 29-ի արտահերթ նիստի օրակարգը.

1) Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

2) «Երևանի Արաբկիրի մենապայքարային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին:

1. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լևոն Հովհաննիսյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ**- Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 8 անդամ.

1. Տիգրան Գալստյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Անի Խաչատրյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

3. Սերգեյ Գյոզալյան-Երևանի ավագանու անդամ

Նիստը ժամը 11.30-ից վարում էր Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

4. Իզաբելլա Աբգարյան-Երևանի ավագանու անդամ

5. Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

6. Հայկ Միրզոյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

7. Մարատ Թոխյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

8. Գայանե Վարդանյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լևոն Հովհաննիսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լ. Հովհաննիսյանին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Անի Խաչատրյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լ. Հովհաննիսյանը:

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը և քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Դ. Համբարյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** – Ելույթների համար գրանցվել են ավագանու 9 անդամ.

1. Իզաբելլա Աբգարյան-Երևանի ավագանու անդամ

2. Արման Անտոնյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Լիլիթ Կիրակոսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4. Տիգրան Գալստյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

5. Սերգեյ Գյոզալյան-Երևանի ավագանու անդամ

6. Լուսինե Գևորգյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

7. Լևոն Զաքարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

8. Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

9. Գրիգորի Երիցյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության քարտուղար Արմեն Գալստյանը առաջարկեց հաշվի առնելով, որ ժամը 13:00-14:00-ը հայտարարվում է ընդմիջում, Երևանի ավագանու 29.07.2021թ. արտահերթ նիստի աշխատանքները շարունակել և ընդմիջում չհայտարարել:

Առաջարկն ընդունվեց:

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության քարտուղար Արմեն Գալստյանը:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լևոն Հովհաննիսյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N10-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 42 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 35, դեմ՝ 2, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

**2. ԼՄԵՑԻՆ** - «Երևանի Արաբկիրի մենապայքարային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ**- Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 6 անդամ.

1. Տիգրան Գալստյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ  
Նիստը ժամը 13.30-ից վարում էր Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ. Սարգսյանը:

2. Լևոն Զաքարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Անի Խաչատրյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՄ խմբակցության քարտուղար

4. Մարկոս Հարությունյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

5. Արման Բաբաջանյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

6. Էռնեստ Ավանեսով-Երևանի ավագանու անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Մարատ Թոխյանը տեղեկացրեց, որ «Երևանի Արաբկիրի մենապայքարային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

«Երևանի Արաբկիրի մենապայքարային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ. Սարգսյանը և քաղաքապետի տեղակալ Գ. Մելքոմ Մելքոմյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** – Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Էռնեստ Ավանեսով-Երևանի ավագանու անդամ

2. Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. «Երևանի Արաբկիրի մենապայքարային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխել «Երևանի հեծանվասպորտի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

2. Հաստատել «Երևանի Արաբկիրի մենապայքարային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հոկտեմբերի 1-ից:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 34 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 27, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 5

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐԿՈՒԹՅԱՆ**

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ**

**ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Հ. ՄԱՐԳՍՅԱՆ**